

Հաստատված է

Վավերացնում եմ

ՀԱԱՀ գիտական խորհրդում

ռեկտոր

Ա. Թարվերդյան

„-----“, ----- 2016 թ.

„-----“, ----- 2016 թ.

(արձանագրություն №)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

(լրացուցիչ կրթություն տալու)

Կ Ա Ր Գ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի ազգային ազրարային համալսարանում ուսանողներին բանվորական մասնագիտությամբ ուսուցումը լրացուցիչ կրթություն է, որի արդյունքում տրվում է համապատասխան վկայական:
2. Բանվորական մասնագիտություն ստանալու նպատակով, ուսանողը հայտ է ներկայացնում տվյալ ֆակուլտետի դեկանին: Դեկանը ՀԱԱՀ ուսումնամեթոդական կենտրոնի հետ համատեղ ձևավորում է խմբերը, ենթախմբերը, որոշում դրանց կազմակերպման ժամկետները և ձևերը և կազմակերպում է ուսումնական գործընթացը:
3. Բանվորական մասնագիտությամբ ծրագրեր իրականացնող ամբիոնները սահմանված կարգով կազմում և հաստատման են ներկայացնում անհրաժեշտ ծրագրերը:
4. Բանվորական մասնագիտությամբ ուսանողների գիտելիքների ավարտական քննությունը (ատեստացիան) կատարվում է դեկանի կողմից ներկայացված և ռեկտորի հրամանով հաստատված հանձնաժողովում: ատեստացիոն հանձնաժողովի նախագահ, որպես կանոն, նշանակում են համապատասխան վերադաս կազմակերպությունների և արտադրության նշանավոր մասնագետները:

5. Բանվորական մասնագիտության դասավանդումը, սահմանված ժամաքանակի կատարումը, նյութատեխնիկական բազայի ապահովումը և օժանդակ նյութերի ձեռք բերումը կատարվում է համալսարանի միջոցների հաշվին: Ուսանողը լրացուցիչ մասնագիտության վկայականի և պետական որակավորման հանձնաժողովի աշխատանքների համար ՀԱԱՀ-ի դրամարկղ՝ սահմանված կարգով, մուծում է 1500 դրամ: